ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Լիլիթ Գալստյանի, Արա Նռանյանի, Արմեն Ռուստամյանի, Արծվիկ Մինասյանի և Արտյուշա Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է կենսաթոշակային բարեփոխումների հայեցակարգը, նպատակահարմար ենք համարում կենսաթոշակներին առնչվող հարցերը լուծել դրա ընդհանուր համատեքստում: Միասնական սկզբունքներով կենսաթոշակային ապահովության հարցերի կարգավորումը բխում է կենսաթոշակային ոլորտում պետական միասնական քաղաքականություն վարելու անհրաժեշտությունից: Այդ առումով՝ ներկայացված նախագծերի հեղինակներին առաջարկում ենք ձեռնպահ մնալ ոլորտում հատվածական օրենսդրական փոփոխություններ կատարելուց:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առայժմ աննպատակահարմար է համարում ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի քննարկումն ու ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Համբարձումյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-328-17.09.2008-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (հետայսու՝ օրենսգիրք) 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում «երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» բառերը փոխարինել «որոնք նախատեսված են Հայաստանի Հանարապետության սահմանադրությամբ, ինչպես նաեւ Հայաստանի Հանարապետության սահմանադրությամբ ուղղակի նախատեսված դեպքում նաեւ օրենքով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասից, 115 հոդվածի 1-ին մասից, 129-րդ հոդվածից հանել «եւ 9-րդ» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագիծ
Պ-328[1]-17.09.2008-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի օրենքի (հետայսու՝ օրենք) 16-րդ հոդվածի 3-րդ մասի բ) ենթակետն ուժը կորցրած ճանաչել: Նույն հոդվածի 5-րդ մասից հանել ««բ»» տառը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագիծ
Պ-328[2]-17.09.2008-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի օրենքի (հետայսու՝ օրենք) 54-րդ հոդվածը վերաշարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ՝

«Աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է լրիվ չափով, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքի:

Տարիքային կենսաթոշակ կամ ծերության սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է կենսաթոշակի եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազեցումները կատարելուց, հարկերն ու պարտադիր այլ վճարները հանելուց հետո աշխատող կենսաթոշակառուի կողմից տնօրինվող աշխատավարձի՝ դրական տարբերության չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՕՐԻՆԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ սահմանադրության 14.1 հոդվածով սահմանված է խտրականության արգելքը կապված տարիքից: Բացի այդ, ինչպես վկայում են վիճակագրական մի շարք տվյալներ, որոնք նաեւ միջազգային կազմակերպությունների համար հիմք են հանդիսացել ծերացման գործընթացը դիտել ժամնակակից կարեւոր մարտահրավերներից մեկը (օրինակ՝ ՄԱԿ-ը, որի անդամ է նաեւ Հայաստանի Հանրապետությունը, 2002թ. ընդունեց ծերացման դեմ պայքարի համալիր ծրագիր (մադրիդյան գործողությունների պլատֆորմը)), անձի աշխատաշուկայից դուրս մղումը կապված նրա տարիքի հետ, առավել արագացնում է ծերացման գործընթացը, հասարակությունում ձեւավորում է սոցիալական լրացուցիչ լարվածություն, իր բացասական ազդեցությունն է թողնում սոցիալական ծախսումների բեռի ավելացման ուղղությամբ:

Կարեւոր է նաեւ այն, որ անձին աշխատանքի ընդունումը, ինչպես սահմանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83 հոդվածը, պայմավորված է նրա մասնագիտության պահանջի, որոշակի որակավորմամբ աշխատանք կատարելու կամ ծառայություններ մատուցելու ունակության հետ: Ինչ վերաբերում է աշխատողի որոշակի առավելագույն տարիքով պայմանորված աշխատաշուկայից դուրս գալու հետ, ապա այն պետք է դիտել ոչ թե պարտադիր կատարման ենթակա պահանջ, այլ հնարավորություն, որը պետք է վերապահվի հենց աշխատողին: Գործատուն այս դեպքում ունի մի շարք հնարավորություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ աշխատանքային պայմանագիրը միակողմանիորեն լուծելու համար (օրինակ՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական եւ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, արտադրական անհրաժեշտությունից ելնելով՝ աշխատողների թվաքանակի կրճատումը, աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքի չհամապատասխանելը, աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, աշխատողի երկարատեւ անաշխատունակությունը եւ այլն):

Այլ կերպ ասած, աշխատանքային հարաբերությունների դադարեցումը, կախված տարիքից, բացառությամբ ՀՀ սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, հարկ է դիտել աշխատողի իրավունքի, այլ ոչ թե նրա պարտականության տեսանկյունից, ինչն առավել համահունչ է մարդու իրավունքներին:

Առաջարկվող փոփոխությունը վերաբերում է միայն աշխատանքային օրենսգրքով եւ պետական ոչ առեւտրային կազմակերպությունների օրենսդրությամբ նախատեսված անհարկի սահմանափակման վերացմանը, օրենսդրության համապատասխանեցմանը ՀՀ սահմանադրության նորմերին, ինչպես նաեւ դրանով պայմանավորված աշխատողին հնարավորության ընձեռելու հետ, ըստ որի կենսաթոշակային տարիքի հասած աշխատողն ինքը կարող է ընտրել իր աշխատանքային գործունեության հետագա շարունակման նպատակահարմարությունը: Եթե նա շարունակում է մնալ աշխատանքային հարաբերություններում, ապա նրան վճարվող կենսաթոշակը, կվճարվի այն չափով, որն անհրաժեշտ է աշխատավածի եւ կենսաթոշակի դրական տարբերությունը վերացնելու համար: Սա էականորեն կթեթեւացնի նաեւ ՀՀ պետական բյուջեի սոցիալական բեռը, անձանց հանարավորություն կընձեռի արդյունավետորեն իրացնել իրենց աշխատանքային ունակությունները:

Այս նախագծով չենք անդրադառնում պետական (այդ թվում, քաղաքացիական, պետական հատուկ ծառայության, քաղաքացիական աշխատանք կատարողների շրաջնում) եւ համայնքային ծառայություններում ներգրավված անձանց տարիքային սահմանափակումների հետ, այն լրացուցիչ ուսումնասիրության փուլում գտնվելու պատճառով: